ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1 հեռ. 011-514-162

№ 16-2025թ.

**Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի**

**քարտուղարի ժ/պ Շավարշ Գրիգորյանին**

**Երևանի ավագանու «Մայր Հայաստան»**

**խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանից**

Հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության 10.01.2024թ. N/27.3/909-2025 գրությամբ ուղարկված պետական փորձագիտական եզրակացությունը՝ կից ուղարկվում է «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին» ավագանու որոշման նախագծի լրամշակված տարբերակը:

Առդիր՝ 11 էջ:

Մանուկ Սուքիասյան

29.01.2025թ.

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ «____» 2024թ. N-----Ն

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Կասեցնել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացված «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու եվ Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի նախաձեռնության Երևան քաղաքի ավագանու նիստում քննարկումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Սույն նախագծով առաջարկվում է կասեցնել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման (այսուհետ՝ N 95-Ն որոշում) գործողությունը՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ 2024 թվականի նոյեմբերի 11-ին մեկնարկած «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024թ.-ի մարտի 12-ի N 95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի նախաձեռնության (այսուհետ՝ Նախաձեռնություն) անհրաժեշտ ստորագրություններից ավել քանակով ձևաթղթերը 2024 թվականի դեկտեմբերի 5-ին հանձնվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին ժամանակավոր պաշտոնակատարին և պետք է քննարկվի երևան քաղաքի ավագանու նիստում՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 27-րդ կետի 3-րդ ենթակետի:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշումն ուժի մեջ է մտնելու 2025 թվականի հունվարի 1-ից: Ուստի մինչ Նախաձեռնության քննարկումը, որը ոչ միայն էականորեն տարբերվում է N 95-Ն որոշումից, այլ նաև այն ուժը կորցրած ճանաչելու մասին է, պետք է կասեցվի N 95-Ն որոշումը: Ենթադրվում է, որ Նախաձեռնությունը պետք է արդեն իսկ 2024 թվականի դեկտեմբերի 24-ին տեղի ունենալիք նիստին քննարկվի՝ հաշվի առնելով դրա հրատապությունը՝ պայմանավորված հազարավոր քաղաքացիների մասնակցության և N 95-Ն որոշման դեմ հանդես գալու հանգամանքով, որից բխում է, որ հնարավոր է Երևան քաղաքի ավագանին դրական դիրքորոշում ունենա Նախաձեռնության ներկայացրած նախագծի մասով և N 95-Ն որոշման կասեցումը հնարավորություն կտա՝ ի սկզբանե դադարեցնել դրա գործողությունը, որից հետո Նախաձեռնության ներկայացրած Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով N 95-Ն որոշումը ուժը կորցրած կճանաչվի:

Մեկ այլ պարագայում, երբ Երևան քաղաքի իշխանությունները, անտեսելով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված «ժողովրդավարական պետություն» սկզբունքը, որոշեն, որ Նախաձեռնության նախագիծը պետք է քննարկվի 2025 թվականի հունվարի մեկից հետո, երբ, համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի, Երևան քաղաքի ավագանու հերթական նստաշրջանը սկսվելու է 2025 թվականի փետրվարի 11-ին, ապա առավել քան անհրաժեշտ է դառնում ընդունել N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու նախագիծը՝ մինչ Նախաձեռնության նախագծի քննարկումը:

Առաջարկվող նախագծի չընդունումը 2024 թվականի դեկտեմբերի վերջին սպասվող նիստին կարող է նաև անհարմարություններ ստեղծել տրանսպորտային միջոցներից օգտվողների համար, ովքեր հնարավոր է ձեռք բերեն տարբեր փաթեթներ՝ նախատեսված N 95-Ն որոշմամբ, սակայն Նախաձեռնության նախագծի ընդունումից հետո այդ փաթեթները կիրառական չլինեն, որից վերջիններս զգալի վնասներ են կրելու:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկայացվող նախագիծը անհապաղ պետք է ընդգրկել Երևան քաղաքի ավագանու առաջիկա նիստի օրակարգ և ընդունել այն:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի**

| Հ/Հ | Առաջարկության, առարկության հեղինակը | Առարկության. առաջարկության բովանդակությունը | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ արդարադատության նախարարություն 10.01.2025թ. N/27.3/909-2025 | **ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**<br>1. «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում հղում է արված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն.<br>*«Իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի որոշմամբ նորմատիվ իրավական ակտի կամ նորմատիվ իրավական ակտի մասի գործողությունը կարող է կասեցվել* ***միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:****»* | 1. Չի ընդունվել: |

| | | | |
|---|---|---|---|
| | | Տվյալ դեպքում Նախագծի նախաբանում բացակայում է այն օրենքը, որով սահմանված դեպքերում և կարգով կարող է կասեցվել նորմատիվ իրավական ակտի գործողությունը:<br>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.<br>*«Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են **օրենքով լիազորվել** ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:»:*<br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.<br>*«Նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի): Նախաբանով չեն սահմանվում նորմատիվ դրույթներ: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է **օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը**, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող է ընդունվել նաև այն օրենսդրական ակտի հիման վրա, որն ընդունվել, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական* | |

| | | | |
|---|---|---|---|
| | | *նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ:»:*<br>Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Նախագծի նախաբանում անհրաժեշտ է սահմանել այնպիսի լիազորող նորմ, որը Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանուն կլիազորի ընդունել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին որոշում:<br><br>2. Նախագծի վերնագրում և 1-ին կետում «95» թիվն անհրաժեշտ է փոխարինել «95-Ն» բառով: | 2. Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխությունները: |

Երևան քաղաքի ավագանու

«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

**N** 21/5005-25

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

Ի լրումն 18.12.2024թ. հ. 21/206345-24 գրության՝ Ձեզ է տրամադրվում «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95 որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Առդիր՝ «2» նիշք:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

1/16/2025

X

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN ARMINE 5405610046

Կատարող՝ Ն. Ղուկասյան
Կազմակերպական վարչություն
Հեռ.՝ 011-51-42-54

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

N/27.3/909-2025
«10» հունվարի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

**Հարգելի՛ պարոն Ավինյան,**

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 01/202695-24 գրության՝ կից ներկայացվում է «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95 որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ

Կատարող՝ Աքսանա Ղահրամանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-119

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95 որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

«Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95 որոշման գործողությունը կասեցնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալ դիտողությունները.

1. Նախագծի նախաբանում հղում է արված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն.

*«Իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի որոշմամբ նորմատիվ իրավական ակտի կամ նորմատիվ իրավական ակտի մասի գործողությունը կարող է կասեցվել **միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:**»*

Տվյալ դեպքում Նախագծի նախաբանում բացակայում է այն օրենքը, որով սահմանված դեպքերում և կարգով կարող է կասեցվել նորմատիվ իրավական ակտի գործողությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

*«Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են **օրենքով լիազորվել** ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:»:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«Նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի): Նախաբանով չեն սահմանվում նորմատիվ դրույթներ: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է* ***օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը,*** *որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ կարող է ընդունվել նաև այն օրենսդրական ակտի հիման վրա, որն ընդունվել, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ:»:*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Նախագծի նախաբանում անհրաժեշտ է սահմանել այնպիսի լիազորող նորմ, որը Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանուն կլիազորի ընդունել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման գործողությունը կասեցնելու մասին որոշում:

2. Նախագծի վերնագրում և 1-ին կետում «95» թիվն անհրաժեշտ է փոխարինել «95-Ն» բառով:

**Իրավական ակտերի փորձաքննության**
**գործակալության պետ՝**

1/10/2025

X

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ**